ՆՈՐԸՆԹԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

Մայիսի 12-ին ս. Էջմիածնայ Մայր Տաճարում Նորին ս. Օծութիւն Աղդիս Վեհապետը խարտուիլակութեամբ Գեր. Տ. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունու եպիսկոպոս ձեռնադրեց երկու տաճկահայ եկեղեցականներին՝ Վանի առաջնորդ Տ. Սահակ վարդապետ Բագրեանդեանին և Ամասիայի ու Մարզուանի առաջնորդ Տ. Արիստակէս վարդապետ Վանքեանին։

Հանդէսը շատ փառաւոր էր և ներկայ էին խուռն բազմութիւն։ Ս. Պատարագին երգում էր Հ. Կոմիտաս վարդապետի երգեցիկ խումբը։

Նորընծաներ Գեր. Տ. Սահակ եպիսկոպոսը Կարսի վիճակով արդէն ուղևորուեց իւր պաշտօնատեղին, իսկ Գեր. Տ. Արիստակէս եպիսկոպոսը կուղևորուի այս օրերս Թիֆլիսի վրայով, տանելով իւր հետ ս. Միւռոն Տաճկահայոց եկեղեցիների համար։

ՀԱՅՆԻ ՄՏՔԵՐԻՑ

Աշխարհը մեծ ժայռ է, որի վերայ մարդկութիւնը՝ իսկական Պրոմէթէոսը, շղթայուած կաշկանդուած է և կասկածի անդղից լաչուում, մասքանց է լինում։ Նա՝ մարդկութիւնը լոյսը գողացել է և դորա համար սարսափելի տանջանքներ է կրում։

—

Արուեստը և փիլիսոփայութիւնը, պատկեր և գաղափարը ամենից առաջ միմեանցից բաժանուեցին լոյների միջոցով։ Այդ երկուսի ձուլումը կրօնի մէջ կատարուել, նախընթաց է եղել երկուսից էլ (արուեստից և փիլիսոփայութիւնից) առաջ։

—

Միտքը անտեսանելի, աներևոյթ բնութիւնն է, բնութիւնը տեսանելի միտքն է։

—

Հրէութիւնը աղնուապետութիւն (արիստոկրատիա) է. մի Աստուած ստեղծել է աշխարհը և կառավարում է այն. բոլոր մարդիկ Նորա որդիքն են, բայց հրէաները Նորա սիրելիներն են և նրանց երկիրը Նորա ընտրեալ երկիրն է։ Նա միապետ է, հրէաները աղնուականներ, իսկ Պաղեստինը Աստուծոյ սիրելի երկիրն (Exarchat) է։

Քրիստոնէութիւնը ժողովրդապետութիւն (դեմոկրատիա) է. մի Աստուած ստեղծել է ամեն ինչ և կառավարում է ա-